ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2025թ.
ԹԻՎ 239

«Սավա»ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 03514047
(Հասցե՝ Ք.Աբովյան Հանրակացանային 8)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Աշտարակի համայնքապետարանի և «Սավա»ՍՊԸ-ի միջև 2025 թվականի հունվարի 08-ին կնքվել է ՀՀԱՄԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-2 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր)սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունըկազմումէպայմանագրիանբաժանելիմասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

«ՍավաՍՊԸ » -ի կողմից 14.01.2025թ ներկայացվել է գրություն,համաձայն որի էլեկտրոնային աճուրդի ժամանակ 15-րդ չափաբաժնի գնային առաջարկում տեղի է ունեցել վրիպակ որի պատճառով առաջարկվում է միակողմանի լուծելու պայմանագիրը 15-րդ չափաբաժնի մասով:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանգիրը, եթե Կատարողն է ականորեն խախտել է պայմանգիրը.

ա) խախտվել է մատակարարման ժամկետը /մատակարարումը չի մատակարարվել/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սավա» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը հրաժարվել է մատակարարել ապրանքը՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված ընդհանուր 128 400 (մեկ հարյուր քսանութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով ՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

<Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով «Սավա» ՍՊԸ-ին տրվում է 10 /տասը/ օրացուցային օր տուժանքով սահմանված որոկավորման ապահովման 210 600/երկու հարյուր տասը հազար վեց հարյուր/ ՀՀ դրամը և պայմանգրի ապահովման 140 400 /մեկ հարյուր քառասուն հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ գումարները Աշտարակի համայնքապետարանի 900445101083 հաշվին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում <Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «Սավա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Առդիր՝ 2 էջ:

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝
Հ. Հակոբյան
/0232/3-10-26*114